«27» հունիս 2025թ. **N 369**

Դեբիտորական պարտքը անհուսալի ճանաչվելու վերաբերյալ

Հարց

1.Կազմակերպությունը իրացրել է 8.000.000 մլն ՀՀ դրամի ապրանք, արդյունքում առաջացել է դեբիտորական պարտք: Այս գործարքը իրականացնելիս կողմերի միջև պայմանագիր չի կնքվել: Նշված դեպքում դեբիտորական պարտքը վաճառող կազմակերպության համար համարվելու է անհուսալի գործարքին հաջորդող 60-րդ և 365-րդ օրը լրանալուց հետո, թե գործարքին հաջորդող 3 տարին լրանալուց հետո:

2.Կազմակերպության մոտ առաջացել է 5.000.000 մլն ՀՀ դրամի դեբիտորական պարտք: Գնորդ կողմը վճարել է տվյալ պարտքից 4.750.000 մլն ՀՀ դրամ, արդյունքում մնացել է 250.000 ՀՀ դրամ դեբիտորական պարտք: Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 123-րդ հոդվածի կարող է արդյոք տվյալ 250.000 ՀՀ դրամ դեբիտորական պարտքը անհուսալի ճանաչված հարկային տարում նվազեցվել համախառն եկամտից:

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

Պատասխան

ՀՀ հարկային օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են Կառավարության սահմանած կարգով շահութահարկ վճարողների (բացառությամբ նույն մասի 3-րդ կետով սահմանված դեպքերի) կողմից՝ *(ա)* անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման համար պահուստին կատարվող մասհանումները, *(բ)* անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման դեպքում՝ այդ նպատակով ստեղծված պահուստին կատարված մասհանումները գերազանցող գումարները:

Նույն կետի կիրառության իմաստով՝ 300 հազար դրամը գերազանցող ընդհանուր գումարով դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ դատական ակտի (վճռի, որոշման կամ կարգադրության, բացառությամբ դեբիտորական պարտքի գումարը ներելու կամ այն որևէ հիմքով չպահանջելու վերաբերյալ կայացված վճռի, որոշման կամ կարգադրության)՝ օրինական ուժի մեջ մտնելու օրվանից կամ դատարանի կողմից արձակված վճարման կարգադրության՝ օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստանալու օրվանից կամ դեբիտորական պարտքի գումարի բռնագանձման պահանջով նոտարի կողմից արձակված կարգադրության՝ կողմերի համար պարտադիր դառնալու օրվանից կամ դեբիտորական պարտքի բռնագանձման պահանջը քննած արբիտրաժային տրիբունալի կողմից վճիռ (բացառությամբ դեբիտորական պարտքի գումարը ներելու կամ այն որևէ հիմքով չպահանջելու վերաբերյալ կայացված վճռի) կայացվելու օրվանից:

Միաժամանակ, «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի (22.01.2025թ., ՀՕ-19-Ն) 2-րդ հոդվածին համապատասխան՝ վերոնշյալ դրույթը տարածվում է 2025թ. հունվարի 1-ից հետո ծագած պարտավորությունների վրա:

Մինչև 2025թ. հունվարի 1-ը ծագած պարտավորությունների մասով 100 հազար դրամը գերազանցող ընդհանուր գումարով դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ դատական ակտի (վճռի, որոշման կամ կարգադրության, բացառությամբ դեբիտորական պարտքի գումարը ներելու կամ այն որևէ հիմքով

չպահանջելու վերաբերյալ կայացված վճռի, որոշման կամ կարգադրության)՝ օրինական ուժի մեջ մտնելու օրվանից:

ՀՀ կառավարության 05.10.2017թ. N1373-Ն որոշման N1 հավելվածով հաստատված կարգի 4-րդ կետի համաձայն՝ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքը համարվում է կետանցված, եթե այն նույն կարգի 2-րդ կետում նշված հիմքերով սահմանված ժամկետում չի մարվել: Նույն կետի կիրառության իմաստով այն դեպքում, երբ սահմանված չէ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքի մարման ժամկետ, դեբիտորական կամ կրեդիտորական պարտքի մարման ժամկետ է համարվում այդ պարտքն առաջացնող գործարքի (գործառնության, փաստի) կատարման օրվան հաջորդող 60-րդ օրը:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում ենք, որ տվյալ դեպքերում.

- մինչև 2025թ. հունվարի 1-ը ծագած պարտավորությունների մասով 100 հազար դրամը գերազանցող ընդհանուր գումարով դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի՝ դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ դատական ակտի (վճռի, որոշման կամ կարգադրության, բացառությամբ դեբիտորական պարտքի գումարը ներելու կամ այն որևէ հիմքով չպահանջելու վերաբերյալ կայացված վճռի, որոշման կամ կարգադրության)՝ օրինական ուժի մեջ մտնելու օրվանից,

- 2025թ. հունվարի 1-ից հետո ծագած պարտավորությունների մասով 300 հազար դրամը գերազանցող ընդհանուր գումարով դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի՝

ա) դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ դատական ակտի (բացառությամբ դեբիտորական պարտքի գումարը ներելու կամ այն որևէ հիմքով չպահանջելու վերաբերյալ կայացված դատական ակտի)՝ օրինական ուժի մեջ մտնելու օրվանից կամ

բ) դատարանի կողմից արձակված վճարման կարգադրության՝ օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստանալու օրվանից կամ

գ) դեբիտորական պարտքի գումարի բռնագանձման պահանջով նոտարի կողմից արձակված կարգադրության՝ կողմերի համար պարտադիր դառնալու օրվանից կամ

դ) դեբիտորական պարտքի բռնագանձման պահանջը քննած արբիտրաժային տրիբունալի կողմից վճիռ (բացառությամբ դեբիտորական պարտքի գումարը ներելու կամ այն որևէ հիմքով չպահանջելու վերաբերյալ կայացված վճռի) կայացվելու օրվանից,

- 2025թ. հունվարի 1-ից հետո ծագած պարտավորությունների մասով 300 հազար դրամը չգերազանցող ընդհանուր գումարով դեբիտորական պարտքը ճանաչվում է անհուսալի՝ կետանցված դառնալու 366-րդ օրվանից:

Տեղեկացնում ենք նաև, որ դեբիտորական պարտքը համարվում է կետանցված, եթե այն սահմանված ժամկետում չի մարվել: Այն դեպքում, երբ սահմանված չէ դեբիտորական պարտքի մարման ժամկետ, ապա դեբիտորական պարտքի մարման ժամկետ է համարվում այդ պարտքն առաջացնող գործարքի (գործառնության, փաստի) կատարման օրվան հաջորդող 60-րդ օրը:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am